№ 2 ՓԵՏՐՎԱՐ 1909

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


| | |
|---|---|
| Նուէր Հրահատին — — — | Յ. ՊԵՏՐՈՍԵԱՆ |
| Ա՜յ բալա (ժողովրդ.)— — — | Յ. ԱՂԱԲԱԲ |
| Դրդօռանջ — — — | ՉԱՐՈՒՀԻ |
| Մանուկ Յիսուսին օրհնում է Սիմէօն ծեր. | ՊԱՏԿԵՐ |
| Կնքատէք (մանկ. խաղ) — — | Յ. ԱՂԱԲԱԲ |
| Դժբաղդ եղբայրները (շար.) — — | ՍԷՅՐԻ |
| Վարդանուշին անտառում գտել է Հայկանուշը | ՊԱՏԿԵՐ |
| Մրջիւնները ու մոծակները — — | Պ. ՄՈՇՈՒԵԱՆՑ |
| Մեղուների պարը — — | Ալ. ՓԻՇՄԻՇԵԱՆՑ |
| Լծկանները ու չղջիկը (առակ) — | ԱՏՊՐՊԵՏ |


## ՓՈՓՈՆՑ


| | |
|---|---|
| Ածխաթթու — — — — | Լ. Մ. |
| ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ | |
| Պատկերազարդ զուարթ ամսաթերթ | |
| Խմբագիր-հրատարակիչ Մանկ. Աշխարհի | ՊԱՏԿԵՐ |
| Թէ ինչպէս ես խմբագիր դարձայ — | ԱՄԲԻԿ |


## ՋԻՄՐՃՄԼԻՔ


| | |
|---|---|
| Կռունկ (ժողովրդ.) — — — | Ք. Ս. |
| Բունգլներ — — — | ԾԻԿԼՕ ԳՐՈՂ |
| Աղբիւրի պատասխանները | |
| Լուծուած փօկուս-խնդրի — — | Յ. ՉԱԼԵԱՆ |


## ՅԱՃՏՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

*Յաւելուած*

ԱՂԲԻՒՐԻ Ա.ԿՈՒՆՔԸ. 1 պրակ

ԱՂԲԻՒՐ

ԱԶԳ — — — — Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ, Ն. Ա. ՍՕԼՈՎԻԵՒ-ՆԷՄՄԵԼՈՎ, ՆԱՏԱԼԻԱ ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ-ՄԻՐԶՈՅԵԱՆ, ԴԱԲՐԻԷԼ (ԴԱԲՕ) ՄԻՐԶՈՅԵԱՆ, ՐԱՖՖԻ, ԻՇԽԱՆՈՒՀԻ Ս. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ, Կ. Կ. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, Ն. Վ. ՏԷՐ-ՍԻԵՏՒԲԵԱՆ, Վ. ՓԱՓԱԶԵԱՆ, Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Լ. Մ.-ԱԴԱՄԵԱՆ, ՍՐԻՆԳ, ԱՇՈՒՂ ՉԻՒԱՆԻ։

## ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

*ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔԸ լոյս կըտեսնէն իւրաքանչիւր ամիս ԱՂԲԻՒՐԻՆ կից և առնուազն այն ծաւալով, որ այսօր հանդէս են գալիս։ Կըստանան բացառապէս ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ մէկնոյն հասցէով բաժանորդները։*

*ԱՂԲԻՒՐԻ ներկայ №-ում տպագծները անխտիր ուղարկում ենք այս անգամ մեր բոլոր, նոյն իսկ 1 ր. բաժանորդագին վճարող դպրոցական աշակերտուհ. և աշակերտներին էլ ԻԲՐԵՒ ՆՄՈՒՇ։*

**ԱՂԲԻՒՐԻ** *ներկայ №-ը հատուկ չի վաճառում.*

XXVII **Ա Ղ Բ Ի Ւ Ր** XXVII

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Քսանւեթերորդ տարի* *1909* *№ 2.* *Փետրուար*

**Խմբագիր-հրատարակիչ՝ Յիգրան Նազարեան**

*Ե Ի Լ Ր*

## ՀՐԱՀԱՏԻՆ

—

*Համով, հոտով, ինչպէս ծաղիկ՝*
*Վառ ու կարմիր թերթունքով,*
*Նուրբ ու քնքոյշ, շաղիկ-մաղիկ,*
*Հեզ ու անոյշ աչքունքով.*

*Քաղցր ժպիտ սիրուն դէմքիդ,*
*Շողում ես դու որպէս լոյս,*
*Թիթեռի պէս անմեղ հոգիդ*
*Ընչում է ինձ մատաղ յոյս։*

*Քաղցր մանուկ՝ հոգուս ճրագ,*
*Մնա միշտ վառ և ամբիծ.*
*Ապրիր ուրախ՝ որպէս հրեշտակ,*
*Անվիշտ, անցաւ, անկսկիծ...*

**Շարուրիւն Պետրոսեան**

## Մ Յ Ր Ս Լ Ս...

*(Ժողովրդականից)*

*Գարնան վարար ջրերի՝*
*Փրփուրը դու՛ս, ա՛յ բալա,*
*Զարդ տանեմ քո՛ւ,*
*Կարմիր ու ալ ճղների՝*
*Բլբուլը դո՛ւս, ջա՛ն բալա,*
*Ցաւդ տանեմ քո՛ւ...*

*Ծաղկակոլոր ծառերի՝*
*«Ճուճուփը» [1]) դո՛ւս, ա՛յ բալա,*
*Ղադէտ առնեմ ես,*
*Կանաչկոտած սարերի՝*
*«Սուրփսուփը» [2]) դո՛ւս, ջա՛ն բալա,*
*Չանս մատաղ քեզ։*

*Ջա՛ն, ջա՛ն, էս բալէն,*
*Էս բալէն է իմ փայը,*
*Ջա՛ն, ջա՛ն, էս լալէն,*
*Սա է աշխարհքի թայը։*

**Ցակ. Ասլաբար**

---

[1]) Ծաղկեփունջ, [2]) Ժողովուրդը աւանդաբար հաւատում է, որ սարերի, անտառների և ջրերի մէջ սուրբ հոգիներն են ապրում։ «Սուրփսուփ» նշանակում է՝ սուրբ հոգի։ Յ. Ս.

# ԴԸՌԴՕՌԱՆՋ

Խմաբաքերը ժամիցը եկաւ մի զառվարաղ մոմ ձեռքին վառ։ Թոռներն ու խնամունց երեխերքը մի քանի րոպէ առաջ էին տուն վերադարձել, ամենքի ձեռքին էլ նոյնպէս մի-մի բարակ մոմ վառած։ Ոչ թէ քամին, այլ սաստիկ փոթորիկն իսկ աւելի շուտ կարող էր բակի մեծ տանձենին գետին գլորել, քան երեխաների ձեռքի մոմը հանգցնել։

Ձեռքերում թագցրած զառվարաղ վառ մոմը, Սիմա աքերը հէնց որ մտաւ բակը թէ չէ, գուռնան սկսեցին ածել։ Հիւրերը, հարսները, աղջկերքն ու երեխաները բոլորն էլ վերևից իջան բակը։ Պառաւներն ու խնամունց մեծ-այաններըը պատշգամբը դուրս եկան։

Սիմա աքերը բակի մէջտեղում խաչափարք (քառակուսի) սարքած ծառերի չորացած ճղներից խարոյկը վառեց, փառք տուաւ Աստուծոյ, որ ինքն էլ Սիմոն-ծերուկնու պէս տեսաւ իր հէրանց տան լուսավառ օջաղը և աղբօր նորապսակ հարս Վարդանուշի ջուխտ թշերն ու ճակատը համբուրելով, բարձրացաւ պատշգամբն իր հասակակից պառաւների մօտ։

Գուռնան ածում էր, հարս ու աղջկերքը հերթով ցատկում էին վառ խարոյկի վրայով։

*Վարդանուշին, որ ութ օր չբկար Մարաքունց Սա-
յուն հետ պսակվելուն, այսօր քառասունք են դուրս բերել։
Երեք անգամ Վարդանուշին ցատկեցրին խարույկի վրայից
և ապա երեսի քօղանաղը, որ պսակվում իրիկունը գցել էին,*

*Մանուկ Յիսուսին օրհնում է Սիմէոն ծերունին*

*այնտեղ վեր առին ու բարձրացան մտան սենեակները։
Այստեղ աչքդ տայ բարին տեսնայ։ Հարսանիքի հաւասար
սեղան էր բացւած։ Սիրտդ ինչ ուզի. հալւա, անգամ, քա-*

թա, կաթնահունց։ Էլ աշխարհիս ինչ տեսակ մրգեղէն, նօղուշ, աբրնապատ, ինչ կամենաք, բոլորը կըգտնէիք։

Երբ խնամունք և միւս հիւրերը ուրախութիւն արած ցրւեցին տուն և Սիմա աքերն էլ պատրաստւում էր անկողին մտնելու, իր չարաճճի Սիրանոյշ թոռը, որ տատի հետ ճաշացել էր մեծ պապունց տան, դարձաւ տատիկին.

—Մեծ այան, ինչու ասացիր Սիմօն-Ծերունու պէս տեսայ վառ օջաղը։ Սիմօն Ծերունին երբ ա թազա հարսին քառասունք դուրս բերել։

Քրմատաղ, շորերդ հանի, մտի տեղերդ, ես էլ պարկեմ, հէքիաթ անեմ, լսի իմաց։ Յօդնեցի՝ վէննահան ըլի էսօր, էնքան մտն եկի, տօն ու տիւս արի։

Երբ թոռն ու տատն արդէն անկողնուն էին, տատիկը սկսեց պատմել.

Սուրբ կտակարանում գրւած է, որ Սողոմոնի տաճարում ապրում էր մի Ծերունի քահանայ։ Սա Աստուծուն ուխտ էր արել, որ ինքը չըմեռնի, մինչև Յիսուս-Քրիստոսին իր աչքովը չըտեսնի։ Եւ ահա ծնւում է Յիսուս-Քրիստոսը և երբ քառասուն օրը լրանում է, օրէնքի համեմատ երկու ազաւնի է վեր առնում Մարիամ Աստուածածինը և իր Միածնին բերում տաճարը քառասունքը կատարում։ Ահա այդտեղ է, որ Սիմօն-Ծերունին մանուկ Յիսուս-Քրիստոսին խոստում է, փառք տալիս, որ իր աչքով տեսաւ իր օջախի, Սողոմոնի տաճարի լոյսը։

—Մեծ այան, տատին ընդհատեց Սիրանոյշը, ախր թազահարսը մանուկ Յիսուս-Քրիստոս է։

—Դէ սպասի, որ տեղւատեղ պատմեմ։ Թազա-հարսը նորածին մանուկ չի, քըմնատաղ, ամմա նա էլ որ հարս է գալիս իմ հօր օջաղին, նա նորից համարեա ծնւում, նոր աշխարհ է գալիս։

Դէ սպասեցէք, որ քառասուն օրը լրանայ, յետոյ քառասունքը կատարեցէք։ Այսօր սկի ութ օր էլ չէ միայն պահւելուն, նորից ընդհատեց Սիրանոյշը։

—Ա՛ղջիկ, համբերութիւնը բաժանելիս դու ձրաեղ ես

*եղել։ Ուսումնարնում էդքանն էլ չըսովորեցիը, որ մեծը խօսելիս, խօսքը չեն կտրիլ։ Ասում եմ սպասի, որ տեղ-տառեղ նադղ անեմ։*

*—Ի՞նչ անեմ, մեծ-այան, ուզում եմ ամեն ինչ խոկոյն իմանամ։*

*—Դէ որ մին էլ խօսքս բերանումս թողեցիը, իմանաս, որ չեմ ասելու, խրոխտաց տատիկը և շարունակեց։*

*Սովորաբար եթէ աղջիկը տարեայ ուրիշ ամիսներում է պակասում և քառասունքը ղըդղօանջից առաջ է լրանում, էն վախտը ի հարկէ հարսին քառասունքը չէ կատարւում այսպէս։ Իսկ եթէ հէնց աղջիկը երէկ լինէը պակասած և այսօր էլ լինէը ղըդղօանջը, էն վախտը քառասունքը լրանում է այսօր։*

*Ծառի չորացած ճղներով խարոյկի վառելը նշանակում է, որ չորացածը, ինձ նման անպէտքացածը թող մոխիր դառնայ ևև հողին հետ խառնւի և ծլի-ծաղկի նորբողբոջը։*

*—Չեմ ուզում, չեմ ուզում, մեծ-այան, որ այդպէս է, սկի մի էլ շարունակիր, չեմ ուզում և ականջներն էլ երկու ձեռքով ծածկելով, երեսը շուռ տուաւ տատիցը։*

*Սիմա աքերն էլ հէնց էդ էր ուզում։ Ինքն էլ շուռ եկաւ աչ կողքին, երեսին երեք անգամ խաչակնքեց և անուշ քնի մէջ մտաւ։*

**Զարուհի**





# Կ Ն Ք Ի Ս Տ Է Ք

*(Մանկական խաղ)*

I

*Եօթ-ութ տարեկան փոքրիկ Իսկուհին*
*Մի տիկնիկ ունէր.*
*Թշերը կարմիր, աչքերը թուխ-թուխ,*
*Մազը գանգրահեր,*
*Թամփլիկ թաթերով ձեռքերը շարժուն,*
*Ոտքերը նոյնպէս,*
*Ճիշտ իրեն եղբօր, երեք տարեկան*
*Սմբատիկի պէս։*
*Տիկնիկի համար՝ Իսկուհին իրենց*
*Տան պատուհանում*
*Տունիկ էր շինել ու նրան խնամքով*
*Այնտեղ էր պահում.*
*Դասերից յետոյ, նրա մօտ նստած,*
*Ինքը՝ Իսկուհին*
*Տիկնիկի համար կարում էր, ձևում*
*Կուրտիկ ու լէհին.*
*Շատ անգամ էլ նա՝ ծնկանը դրած*
*Սիրուն տիկնիկին՝*
*Իր մայրիկի պէս՝ «պապար» էր ասում՝*
*Ուրախ, սրտագին.*
*«Պապար, պապար, սիրուն ջան,*
*«Վեղիդ մատաղ՝ կըչ-կըչան,*
*«Պապար արա, գօրանաս,*
*«Ձագն ու կոճը մոռանաս»։*

II

Մէկ օր Իսկուհին՝ մաքուսը դրեց,
Որ «կնքի» նրան
Ու երբ՝ իր մօրից իրաւունք առաւ
Տօնախմբութեան՝
Հրաւէր ուղարկեց դասընկերներից
Գրեթէ ամենքին,
Որ բարեհաճեն ներկայ լինելու
Տիկնիկի կնունքին։
Հիւրերը եկան. Աստղիկն ու Լուսիկ,
Արփենիկ, Ստեփան,
Աշխէնն ու Զառվարդ, Հերսեկն ու
Մարիամ
Արուսն ու Շուշան,
Արշալոյսն ու քաւոր Գաբրիէլը
Առօք ու փառօք՝
Եկան բազմեցին ամենքն իրենց
Տեղերը՝ չոկ-չոկ։
Եկած հիւրերը տիկնիկին իրենց
Գրկերն առան,
Համբոյր, փաղաքշանք չըխնայեցին
Այդ օրը նրան.
Վարսենիկ քոյրը՝ խնդրեց Արշօին,
Որ տէր-տէր դառնայ,
Քանի որ վաղուց ժամերգութեան հետ
Լաւ ծանօթ էր նա։
—Լաւ, լաւ, ասացէք, անունն ինչ
դնենք,
Հարցրեց Արշօն։
—Անդրանիկ լաւ է, Անդրանիկ դրէք,
Ասին բոլորն։
Տիկնիկի մայրը—փոքրիկ Իսկուհին
Ցանկացաւ՝ «Համօ»,
Պատճառ բերելով, թէ այդ անունն է՝
«Հոտով ու համով»։

Բայց երբ հարցրին՝ քաւոր Գաբրիէլի
Կամքը պատւաւոր՝
—Անդրանիկ, ասաւ, որ իմ սանիկը
Լինի զօրաւոր։
—Դէհ, ձուրը բերէք, կնդուղը բերէք,
Արշօն պատւիրեց,
Որ մի հաստ վերմակ ուսերին գցած՝
Դարձել էր երէց։
Արշօն իր համար տիրացու ընտրեց՝
Ջայնով Բարդիկին,
Մոմերը վառեց, մէկ-մէկ բաժանեց՝
Մեծին ու փոքրին,
Նորամանուկն էլ քաւորին տալով,
Պատւիրեց գրկել,
Տիրացուի հետ՝ ինքը բարձրաձայն
Սկսեց երգել.
«Ալէլուեա, ալէլուեա,
Անդրանիկի գլուխը լա,
Ալէլուեա, ալէլուեա,
Անդրանիկի ձեռքը լա»։
Էսպէս կնքեցին, ու յետոյ տարան
Մօր գիրկը դրին,
Ամենքը ուրախ, մօտեցան նրան
Շնորհաւորեցին.
—Աչքդ լուս, Ուտիկ, ապրի Անդրիկդ,
Բարով մեծանայ,
Ու իր քաւորի նման պատւաւոր
Տղամարդ դառնայ։
Ապա նստեցին՝ արդէն պատրաստած
Մրգի սեղանին,
Մէկ-մէկ բաժակ թէյ, շաքրով կար-
կանդակ
Լաւ անուշ արին,
Կերան-կշտացան «Ճնաս բարևները»
Ասին մէկ-մէկուն,
Քէֆները ուրախ, ճանապարհւեցին՝
Ամենքն իրենց տուն։

**Ցակ. Աղաբաբ**

# ԹՓԻԱՂՊ ԵՐԵԽԱՆԵՐԸ

II

Բայց բաղդաւոր չէին խեղճ Գուրգէնն ու Մինասը։

Տաբաւայ սկզբից դեռ շատ չէր անցել, երբ նրանք սկսեցին տխրել ու լաց լինել և դպրոցում։

Մի օր անցնում էի փողոցով, երբ տեսայ իմ դիմաց գալիս էին Գուրգէնն ու Մինասը։ Սովորականին պէս գալիս էին փողոցի մէջով անցնող երկաթուղու երկու գծերի մէջտեղով, իրարից բոնած ու անփոյթ։ Բայց այդ օրը Գուրգէնը մի ինչոր արտասովոր դրութեան մէջ էր. եղբօր կողքից քայլում էր գլուխը կախ գցած, օրօրւելով ու տխուր. գլխարկն էլ գլխին չէր և մի ինչ որ բան ունէր բոնած ձեռքին, որի ինչ լինելը դժւար էր ո՞րոշել։

Ես քայլերս դանդաղեցրի և ուշադրութեամբ դիտում էի նրանց։ Երբ մօտեցայ, նրանք սովորականի պէս կանգնեցին ու բարևեցին, Գուրգէնը կարծես նոր զգաց, որ գլխին գլխարկ չունէր և շփոթւելով վեր բարձրացրեց ձեռքին բոնած բանը։ Նա հակառակ իր սովորութեան այսօր չը ժպտաց, այլ միայն մի անորոշ հարցական հայեացք ուղղեց ինձ։

Նրանց կանչեցի ինձ մօտ։

Երկուսն էլ կամաւալով, մտան գծի ցանկորմի տակով ու դուրս եկան ինձ մօտ։ Գուրգէնը հագած ունէր ինչոր օտարոտի ու մեծ կօշիկներ, որոնց հաղիւ էր քաշ տալիս, գետնին քսելով։ Ես առաջին անգամն էի տեսնում այդ կօշիկները նրա ոտներին։ Ծերզճ տղայ. ոտքից գլուխ կատարեալ պէս այլանդակ էր։

—Դպրոցից ի՞նչ գալիս, հարցրի։

—Այո։

—Բա ինչո՞ւ այդքան ուշ։

Նրանք լուռ գլուխները կախեցին և միայն Դուրգէնը ցոյց տւեց ձեռքին բռնած բանը։

—Ի՞նչ է դա։

—Գլխարկս է, շունը պատռտեց, ասաց ու բաց արաւ իմ առաջ։

Իրաւ, նրա գլխարկն էր՝ պատառոտուած ու խսպառ ցեխի մէջ թաթախուած։

Բայց ի՞նչ շուն էր և ինչո՞ւ պատառոտեց քո գլխարկը։

—Ա...ն գցեց առաջը, նա էլ պատառոտեց...

—Ինչո՞ւ գցեց, ծեծել, հայհոյել էի՞ր նրան։

Նա լուռ գլուխը կախեց ու նայեց կօշիկներին։

Ես ենթադրելով, որ էլի մի բան պատահած կըլինի դպրոցում Դուրգէնի ու չար աշակերտներից մէկի մէջ, թողի ու հեռացայ։ Բայց խեղճ Դուրգէնը. անկարելի էր նրան չըցաւել. ես մի անգամ յետ դառայ, նայեցի նրան յետևից. կատարելապէս խղճալի էր նա։

Նոյն օրը երեկոյեան մանկավարժական ժողով ունէինք. ես շտապեցի դպրոց, բոլէ առաջ տեղեկանալու դպրոցում Դուրգէնի հետ պատահած դէպքի մասին։ Ներս մտայ, երբ ուսուցիչներից մէկը խօսում էր Ա. հիմն. բաժանմունքի դաստիարակչուհու հետ հէնց այդ մասին։ Օրակարգում էլ կարդացի՝ «*Ոսկինարեանների հարցը*».այդպէս էր Դուրգէնի ու Մինասի ազգանունը։

Անշուշտ պէտք էր ենթադրել, որ մի լուրջ բան պատահած կըլինի։ Մօտեցայ նրանց դաստիարակչուհուն։

—Այսօր Դուրգէնը դպրոց էր եկել մի այլանդակ ու շատ մեծ կօշիկներով, պատմեց նա։ Դասամիջոցին չարաճճի Ա.ն ծաղրում է նրա կօշիկները, ասում է, որ դիշերը Դուրգէնն ու Մինասը իրար խըտրտած, մէյսին նրա մէջ են քնում և խլելով ոտից կօշկի մի հատը նետում է հեռուն։ Դուրգէնը կատաղած, մի քար է գցում նրա յետևից, որ կպչում է մի ուրիշ աշակերտի գլխին ու միքիչ կաշին քերթում։ Հանգստացրինք Դուրգէնին Ա.ին էլ յանդիմանեցինք։ Հիմայ այդ բաւական չէ, տուն վերադառնալիս, փողոցում էլի կռւել են. Ա.ն Դուրգէնի գլխարկը նետել է մի շան առաջ, որը պատառոտել է։ Իսկ պ. Է.ն էլ հարցը դնում է մանկավարժական ժողովի առաջ։

Ժողովն սկսւեց, մենք նստեցինք։

Երբ գրւեց «*Ոսկինարեանների հարցը*», ուսուցիչներից պ. Է... ասաց.

«Պարոններ, մենք ամենքս անգիտակցաբար մի մեծ յանցանք ենք գործում։ Մենք թոյլ ենք տալիս աննորմալ, հոգեպէս հիւանդ երեխաների դպրոցում յաճախել, նստել աշակերտների հետ մի շարքում կողի-կողիի, նրանց հետ սովորել ու նրանց հետ խաղալ։ Գուրգէն և Մինասս Ոսկինարեաններդ հոգեպէս հիւանդ են. նրանց, մանաւանդ Գուրգէնի հետ մինչև այժմ պատահած մի քանի դէպքերը, դրանց հետ նաև այսօրւայ դէպքը, պարզ ապացոյց են, որ նրանք նորմալ երեխաներ չեն։ Բայց եթէ դա հերիք չէ, բաւական է մի անգամ նայել Գուրգէնի աչքերի մէջ, այդ բանում համոզուելու։ Այսօր, երբ Գուրգէնը կատաղած ահագին քարը նետեց աշակերտների բազմութեան մէջ և երբ տեսայ դիպաւ մէկի գլխին, խոստովանում եմ, որ ինձ զսպել չկարողացայ և ապտակեցի նրան. բայց երբէք իմ կեանքում դեռ այնպէս չէի խղճահարւել իմ որևէ արածի համար, ինչպէս այսօր խղճահարւեցի այդ ապտակի համար։ Երբ Գուրգէնը դէմքը դարձրեց դէպի ինձ և երբ հայեացքս ընկաւ նրա աչքերի մէջ, ես սարսափեցի։ Կատարելապէս ոչ մի արտայայտութիւն չկար նրա հայեացքի մէջ. նա չէր հասկացել, թէ ինչու ես ապտակեցի նրան և չէր կարող հասկանալ, թէ ինչու չըպէտք է նետէր քարը։ Անկարելի է նրանից որևէ բան պահանջել և մենք կատարելապէս անկարող ենք նրան փոխել, կրթել, կամ որևէ բան սովորեցնել։ Նոյնը և Մինասի վերաբերմամբ. նրա դէմքի զարհուրելի դեղնութիւնը, աչքերի մէջ երևացող մանկական հասակում անսովոր դառնութիւնը, ուռած փորը, շարժուձևերը, բոլորը այդ են ասում և անկարելի է չըլսել նրանց։ Պարոններ, յանցանք է հոգեկան հիւանդներին մի րոպէ անգամ դպրոցում պահելը. ես առաջարկում եմ մանկավարժական ժողովին ճանաչել Ոսկինարեաններին աննորմալ, հոգեպէս հիւանդ երեխաներ և արձակել դպրոցից»։

Բոլոր ուսուցիչները լսում էին լուրջ տխրութեամբ և նկատելի էր, որ նրանք մտատանջութեան մէջ էին։ Սկզբում թւում էր, որ ամենքը դժւարանում էին որևէ պատասխան գտնել այդ խօսքերին և լռում էին։ Վերջապէս դաստիարակչուհին դուրս եկաւ պաշտպանելու Ոսկինարեաններին։

—«Ամենից աւելի ես եմ մօտիկ Ոսկինարեաններին և ամենից աւելի լաւ ես եմ ճանաչում նրանց։ Ճիշտ է, որ նրանք նորմալ երեխաներ չեն, որ նրանց արտաքին արտայայտութիւնն այդ է ցոյց տալիս, բայց ոչ այնքան սարսափելի գոյներով, ինչպէս որ նկատեց պ. Է...։ Ճիշտ է, որ նորմալ պայմաններում դպրոցում ներս չէին ընդունւի այդպիսի երեխաները, բայց ա-

մենքիս յայտնի է, որ այդ նօրմալ պայմանները չըկան մեր դըպրոցում. ինչ են մեր բաժանմունքներն այս դրպէիս. ոչ հասակի համաչափութիւն կայ և ոչ ուսման. մեր դպրոցը նոր է, երկար ժամանակ երեխաները դուրկ են եղել դպրոցից. մենք ամենքս յօժարութեամբ յանձն ենք առնում ամեն տեսակ դժւարութիւններ ու զիջումներ, միայն թէ որչափ կարելի է, շատ երեխաներ օգտուեն դպրոցից։ Հէնց այդ պատճառով է, որ Ոսկինարեանները հէնց ընդունելութեան ժամանակ անմիջապէս չեն նկատուել, հէնց այդ պատճառով է, որ նրանց պէտք է վերաբերուել անպայման որոշ զիջողութեամբ. իսկ այդ զիջողութիւնը թոյլ չի տալիս նրանց դպրոցից արձակել։ Ես ասում եմ, որ Ոսկինարեանները կարող են աշակերտ լինել, նրանք չար չեն և որևէ անախորժ դէպք չի առաջանայ նրանց կողմից, եթէ նրանց չըդրդեն, առիթ չըտան։ Մեր աշակերտները փողոցից նոր-նոր դպրոց են գալիս. չարութիւններ, վատ արարքներ դեռ կըլինեն և մենք նրանց առաջը չենք կարող առնել առ այժմ։ Բայց կանցնի ժամանակ,— միքանի ամիսներ, աշակերտներն աստիճանաբար կըկրթուեն, կը սովորեն իրար վերաբերուել և այն ժամանակ այլևս չեն կրկնուի այսօրւայ նման դէպքեր։ Ոսկինարեաններին հոգեկան հիւանդներ չըպէտք է ընդունել. իսկ մտաւոր թուլութեան պատճառով վատ սովորելու համար մենք իրաւունք չունենք նրանց արձակել։ Կայ նաև մի ուրիշ հանգամանք. ես կասկածում եմ, որ նրանց ընտանեկան պայմաններն են վատ։ Այսօր, դէպքից յետոյ, ես Գուրգէնին ուղարկեցի ծնողներին կանչելու, նա առանց որևէ խօսքի դուրս գնաց. քիչ անց տեսայ նրան և հարցրի, բերեց ծնողներին թէ չէ. նա գլուխը կախեց, լուռ կանգնեց և ես ինչ արի չարի, անհնարին եղաւ նրանից մի պատասխան ստանալ։ Տեսել են, որ թշւառ երեխան դուրս է գնացել, կանգնել է դասն առաջ, լացել է, լացել ու կրկին ներս մտել։ Ենթադրում եմ, որ նրանք ծնողների կողմից դժբաղդ են. ես կառաջարկէի, չըշտապել արձակման վճիռ արձակելու. այլ դեռ սպասել մի առ ժամանակ, տեղեկանալ նրանց ընտանեկան պայմանների մասին, յանձնարարել բոլոր ուսուցիչներին, որ առանձնապէս վերաբերուեն դէպի Ոսկինարեանները, հակեն, որ աշակերտների կողմից չըկրկնուեն ծաղր ու յարձակումներ դէպի նրանց և հեանքնեին նայելով, ըստ այնմ վարուել»։

Ուսուցիչների մեծ մասը համաձայն գտնուեց դաստիարակչուհուն և նրա առաջարկութեան համապատասխան մի որոշում կայացնելով հարցը փակեց։

(Կըշարունակւի) **Սէյրի**

*Վարդանուշին անտառում ս ւ լորւած գտել է Հայկանուշը:*

*(Պատմեցէք բաց նամակներով բովանդակութիւնը, հաղորդելով և ձեր մանրամասն հասցէն):*

# ՄՐՋԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՄՈԾԱԿՆԵՐԸ

*(Նմանութիւն)*

Ձ

*Մրան մի օր, կէս գիշերին*
*Մոծակների մի բարվան*
*Մեր ժրաջան մրջիւնների*
*Դուռ-երթևեկից ներս թափւան։*
*—«Մեզ տեղ տուէք ու պահեցէք*
*Եւ բան տուէք ուտելու,*
*Մենք եկել ենք ձեր տներում*
*Ողջ ձմեռը կենալու»։*
*Մեր հիւրասէր մրջիւնների*
*Թէև միշտ էր դուռը բաց,*
*Բայց այս անգամ նեղանալով*
*Հարցըրեցին զարմացած.*
*—«Իսկ դուք, ինչպէս, ինչ էք շինել*
*Ողջ ամառը շարունակ,*
*Որ զալիս էք բեռ դառնալու*
*Այսպէս ձըմեռ ժամանակ»։*
*—«Պարապ չէինք, Առիւծ արքան*
*Մեզ կանչել էր իրան մօտ.*
*Մենք երգեցինք, թմբուկ զարկինք*
*Ողջ ամառը նրա մօտ»։*
*Ձաղը կտրած մրջիւնները*
*Իրանց թիքէն կխեցին,*
*Չրիակեր մոծակներին*
*Մինչև դարուն պահեցին։*

—

*Եկան նաև երկրորդ տարին*
*Մոծակները ձրիակեր,*
*Այս անգամ էլ մրջիւնները*
*Կերակրեցին ողջ ձմեռ։*
*Երրորդ տարին, ձմրանմբտին*

Նորից եկան հիւրերը
Ու սկսեցին պինդ-պինդ թակել
Մրջիւնների դռները։
Ոտքի ելան ամեն կողմից
Տան տէրերը հիւրասէր
Եւ վազեցին ու բաց արին
Մեծ ու փոքրիկ դարբասները...
Բայց ինչ տեսնեն էն խեղճերը—
Իրանց անկոչ հիւրերին,
Որոնց նրանք երկու ձրմեռ
Իրանց տան մէջ պահեցին։
—«Էլ չենք կարող պահել ձեզ պէս
Զըրհակեր հիւրերի,
Կամ ինչով ենք մենք պարտական
Միշտ կերակրել ձեզ ձրի»—
Այսպէս ասին զարմանք մեացած
Մրջիւնները զայրացած։
—«Ի՞նչպէս ինչի, մի՛թէ չգիտէք,—
Մոծակները գոռացին
Եւ ծանր ու մեծ տան վերևում
Առանց կանչել բազմեցին։—
«Մի՛թէ չգիտէք, որ Առիւծը,
Մեր բոլորի մեծ արքան,
Ողջ աշխարհին արձակել է
Մի նոր, տեղ հրաման,—
Որ մենք նըրա պալատներում
Միշտ առանց վարձ պիտ երգենք,
Իսկ դուք մեզի, առանց վողի
Ամեն ձրմեռ կերակրէք»...

—

Խեղճ մրջիւններ, դուք չէք մենակ
Այդ փորձանքին ենթակայ,
Կհանքն է այդպէս—մէկն աշխատի,
Միւսն ուտէ ու խրնդայ...

Պետ. Մոծնեան

# ՄԵՂՈՒՆԵՐԻ ՊԱՐԸ

*(Ձագ տալը)*

Մեղուների ընկերութիւնը կազմւած է մի թագուհուց, որ մայր է բոլոր բնակիչների, յիսունից մինչև հարիւր հազար մշակներից կամ չէզոքներից, թերի ու ամոլ էգերից և վերջապէս հարիւրաւոր որձերից, որոնց միջից պիտի ընտրւի մի-ակ ամուսինն իրանց ապագայ վեհապետի համար։ Մենք այստեղ առաջ կը բերենք մեղուների ընկերական կեանքի առաջին դէպքը, այն է պարը (ձագ տալը)։

Ընտրենք որևէ փեթակ և քննենք նրա բնակիչների կազմակերպութիւնը։ Մեր ընտրած փեթակի մեղուները արդէն թօթափել են իրանցից ձմեռային թմրութիւնը։ Թագուհին փետրւար ամսի առաջի օրերին պատրաստ է արդէն ձու ածելու։ Մշակները այցելութեան են գնում նո-

բաբաց ծաղիկներին՝ վարդկակաչին, մեղրածծուկին, մանուշակին, ուռենուն, ակողինին։ Յետոյ գարուն է սիրում երկրին, ամբարները ու հորերը ափիբերան լցւած են մեղրով ու ծաղկափոշիով, հազարաւոր մեղուներ ամենայն օր ծըննդւում են առնում։ Հաստափոր որձեր (բորբը) դուրս են գալիս իրանց ընդարձակ բջիջներից, ըղջագայում են խորբսի (մեղրահացի) միջով։ Բարգաւաճ փեթակը այնչափ է լցւած բնակիչներով, որ երեկոյեան, երբ հարիւրաւոր աշխատաւորները՝ բեռնաւորած մեղրապաշարով, վերադառնում են իրանց փեթակը, այլևս չեն գտնում օթևան և պարտաւոր են լինում գիշերելու փեթակի շեմքում, ուր ցրտից կոտորւում են։

Հէնց այդ միջոցին մի տեսակ անհանգստութիւն ըղփոթում է փեթակի ամբողջ բնակիչներին և հին թագուհին երևում է յուզւած։ Սա զգում է, որ իր համար պատրաստւում է նոր վիճակ։ Նա իբրև բարի արարած բարեպաշտութեամբ կատարել է իր պարտքը և այժմ, երբ կատարած է իր պարտքը, մի տեսակ վիշտ ու նեղութիւն հալածում է նրան։ Մի անյաղթելի ոյժ վրդովում է նրա հանգստութիւնը։ Նա պէտք է թողնէ այն բնակարանը, ուր նա թագաւորում էր մինչև այժմ։ Նա այլ ևս թագուհի չէ նրա մէջ այն ժաքով, որ ընդունած է մարդկանց մէջ։ Այնտեղ նա այլ ևս չէ արձակում հրամանները և, իբրև հպատակներից մէկը, հնազանդւում է այն ծածկախորհուրդ իշխանութեան և վեհ իմաստութեան, որ կոչւում է «փեթակի ոգի»։ Սակայն նա այնտեղ մայր է և սիրոյ միակ առարկան. նա դրեց փեթակի հիմքը։ Նա իր նիւթից շինեց նրան բազմամարդ և նրանք ամենքը, որոնք փեթակին կենդանութիւն են տալիս՝ աշխատաւորները, որձերը, թրթուրները, հարսնեակները և նորածին իշխանուհիները, որոնցից մէկն ու մէկը յաջորդելու է նրան և որի երևալով նա ստիպւած է հեռանալու այդտեղից,—դրանք ամենքը ծնունդ են առել նրանից։ Այդ «փեթակի ոգին» է, որ որոշում է նրա ճակատագիրը։ Սակայն ինչ է այդ

ոգին, ինչի մէջ է կայանում նա։ Նա նման չէ թռչունի բնազդին, որ գիտէ կառուցանել իր բունը և որոնել մի այլ երկինք, երբ հասնում է չուելու ժամանակը։ Նա մի տեսակ մեքենայական ուժորութիւն չէ, որին անհատը կուրօրէն հնազանդւում է և կեանք է հայցում, ընկնելով այս ու այն կողմ, մինչև որ մի անսպասելի դէպք խանգարում է նրան։ Ընդհակառակն, այդ «փեթակի ոգին» քայլ առ քայլ հետևում է ամենակարող դէպքերին իբրև անողորմ և գիտակից երևոյթ։ Նա է, որ կարգադրում է բոլոր թևաւոր բնակիչների հարստութիւնը, բաղդը, ազատութիւնը, կեանքը։ Նա կանոնաւորում է օրէօր ծնունդի թիւը և ճիշտ յարաբերութեան մէջ է դնում նրան փեթթուող ծաղիկների թւի հետ։ Նա, այդ ոգին յայտնում է թագուհուն նրա անկումը, սոխպում է լոյս աշխարհ հանելու իրա ախոյեաններին, կրթել նրանց արքայավայել, պահպանել նրանց մօր առելութիւնից, թոյլ է տալիս կամ արգելում աճեցողութիւնը, նայելով, թէ որքան առատ է նեկտարը։ Միևնոյն ժամանակ նա պաշտպանում է հարսնեակներին սպառնացող վտանգից, որպէս զի կոյս իշխանուհիներից առաջին ծնունդ առնողը չը սպանէ հէնց օրօրոցի մէջ իր քոյրերին, որոնք դեռ ևս քնած են, բայց նրան լսելի են նրանց թագաւորելու մեղեդիները։ Մի ուրիշ ժամանակ, ձմեռնամուտին, երբ ծաղկափթթութեան ժամերն աւելի կարճ են, աշխատանքի փակելու միջոցին այդ ոգին հրամայում է նոյն իսկ աշխատաւորներին կոտորելու արքայական սերունդը։ Մինչդեռ ամառային առատութեան օրերին նա համբերում է երեք կամ չորս հարիւր բորբերի ներկայութիւնը, որովհետև հէնց դրանց միջից նորածին թագուհին պէտք է ընտրէ իրան ամուսին, թէև դրանք, այդ բազմաթիւ բորբերը, թմրած են, անպէտք, պարապ, ազմըկասէր, անմաքուր, անկուշտ, կոպիտ։ Բայց այն օրից, երբ թագուհու պտղաբերութիւնը վերջանում է, երբ ծաղիկները թափւում են ուշ և ցուրտը վրայ է հասնում, այդ

ոգին հրամայում է նրանց ընդհանուր և միանագ կոտորած էլ։

Այդ այն ոգին է, որ կանոնաւորում է մշակներից իւրաքանչիւրի աշխատանքը։ Նայելով նրանց հասակին, նա բաժանում է նրանց պարտականութիւնը։ Սանտուներ հոգում են թրթուրների և հարսնեակների մասին, նաժիշտները հայթայթում են թագուհուն սնունդ և նրան իրանց աչքերից չեն հեռացնում։ Օդամաքրիչներ իրանց թևերը թափահարելով, նորոգում են, զովացնում կամ տաքացնում փեթակը և շտապում են դոլորշիացնել ջուրը մեղրից։ Ճարտարապետներ, որմնադիրներ, մոմագործներ, քանդակագործներ կազմում են շարքեր, կառուցանում են բջիջներ։ Ծաղկաքաղները շրջագայում են՝ ծաղիկներից հիւթ քաղելու, մեղր շինելու համար, ծաղկափոշի հաւաքելու՝ թրթուրներին և հարսնեակներին կերակրելու համար, նոյնպէս ակնամոմ պատրաստելու մեղւանոցի ծակերը փակելու ու ամրացնելու համար, ջուր ու աղ մատակարարելու նորածիններին։ Նա քիմիկոսներին աշխատանքի է դնում իրանց խայթոցների օդնութեամբ խառնելու մեղրի մէջ մրջնական թաւուա մեղրը անարատ պահելու համար։ Խրցան շինողներին՝ կաղնելու մեղրով լի բջիջների բերանը։ Աւելողներին՝ մաքրելու փողոցներ ու հասարակական հրապարակներ։ Մեռելաթաղներին՝ հեռու տեղ տանելու դիակներ։ Թիկնապահներին՝ օր ու գիշեր հսկելու շէնքի ապահովութեան վրայ, հարց ու փորձ անելու եկող-գնացողներին, վերահասու լինելու նորածիններին՝ հէնց սրանց դուրս գալու ժամից, հալածելով շրջամոլիկներին, թափառականներին, աւարառուներին, արտաքսելու անկոչներին, միահամուռ կռիւ մղելով թշնամիների դէմ և եթէ կարիքը ստիպէ՝ փեթակի անցքը ամրացնելու։

Վերջապէս փեթակի այդ ոգին է, որ նշանակում է տարեկան այն մեծ զոհաբերութեան ժամը, այսինքն պարի ժամը, երբ ամողջ բնակչութիւնը՝ հասնելով իր բարգաւաճման ու հարստութեան գագաթնակէտին, յանկարծ

թողնում է ապագայ սերունդին իր բոլոր կարողութիւնը՝ պալատները, վաստակի պտուղները, որպէսզի հեռանան այս-տեղից և որոնեն իրանց համար անյայտ և ամայի տեղում նոր հայրենիք։

## 2.

Այսպէս մեր ընտրած փեթակի մէջ պատրաստւում է պարը—ձագ տալը—մի մեծ զոհ, որ պահանջում է ցեղից վերին տեսչութիւնը։ Հնազանդելով «ոգու» պատւէրին, որ անմեկնելի է մեզ համար և հակառակ մեր ցեղի բոլոր բնազդներին և զգացմունքներին, 70—90 հազար բնակչութիւնից 60—70 հազարը նշանակած ժամին թողնում է հայրական տունը։ Նրանք չէին դուրս գալ այդտեղից մինչև անգամ սաստիկ նեղութեան բռնէին, չէին փախչիլ ու աւերակ թողնիլ իրանց հայրենիքը, եթէ սոխալած էլ լինէին քաղցից, պատերազմից, հիւանդութիւնից։ Ոչ, նրանց փախուստն երկար ժամանակի մտածած բան է և սպասում են համբերութեամբ յաջող օրին, որ իրագործեն այդ չուն։ Եթէ փեթակը աղքատ էլ լինէր ցեղի անբազդութեան կամ աւարառութեան պատճառով, այն ժամանակն էլ չէին թողնիլ իրանց բնակարանը։ Ընդհակառակն, թողնում են հէնց այն ժամանակ, երբ նրանց բազդաւորութիւնը հասել է իր գագաթնակէտին, երբ գարնանային առատ աշխատանքը կառուցել է մեծամեծ մոմեղէն պալատներ 120 հազ. շարէշար կազմած բջիջներով՝ ափիբերան լի մեղրահացով, որով պէտք է կերակրուեն թրթուրները ու հարսնեակները։

Երբէք փեթակը այնքան գեղեցիկ չէ, ինչպէս հերոսական հրաժեշտի նախընթաց օրը։ Այդ մի ջոջին մեղուները ոգևորւած են և կատարեալ հրճւանքի մէջ են։ Փորձենք տեսնելու, թէ ինչ է ներկայանում այդ մի ջոջին ամբողջ փեթակը։ Սա նման է՝ մեղուների չափի համեմատութեամբ, մի բարձր աշտարակի, որ ծայրից մինչև ստորոտը կազմած է մոմեղէն պատերից. սրանք ուղղահայեաց

են, զուգընթաց, բազմադիմի երկրաչափական համակազմութեամբ։ Դրանք կախած են խաւարում ու դատարկ են։ Ոչ մի մարդկային շինութեան հետ չեն կարող համեմատուել դրանք իրանց համաչափութեամբ, ճշտութեամբ, համարձակութեամբ ու մեծութեամբ։ Այդ պատերից ամեն մէկը, որի նիւթը դեռ ևս թարմ է, կուսական, արծաթափայլ, անարատ, հոտաւէտ, կազմած է հազարաւոր բջիջներից, որոնք պարունակում են իրանց մէջ այնքան պաշար, որ կարող է կերակրել բնակչներին շատ շաբաթներ։ Կարմիր, դեղին, սև, մանուշակագոյն փոշին՝ գարնանային ծաղիկների այդ խմորը ամբարած է թափանցիկ բջիջների մէջ։ Բոլոր չորս կողմը, այդ ոսկեղէն գործարանի մէջ, ապրիլ ամսւայ ջինջ ու հոտաւէտ մեղրը հանգչում է քսան հազար պահարանների մէջ, որոնք կնքւած են և կարող են բացւել միայն մեծ վտանգի ժամանակ։ Ստորև մայիսեան մեղրը ևս եփւում է մեծ բաց անօթների մէջ, որոնց ափերին մշակների մի արթուն խումբ մատակարարում է նրան անդադար օդի հոսանք։ Կենտրոնում, լոյսից հեռու, ուր շառաւիղները թափանցում են միակ անցքի միջով, փեթակի աւելի տաք մասում, ապագայ սերունդը քնած է կամ նոր է զարթնում։ Այստեղ է արքայական «չէչը», որ սահմանւած է միմիայն թագուհուն և նրա նաժիշտներին. այստեղ են մօտ տասը հազար բջիջներ, ուր մայրը ձու է ածում, տասնհինգ կամ տասնվեց հազար սեռ եակներ, ուր հանգչում են թրթուրներ, քառասուն հազար անակներ սպիտակ հարսնեակներով, որոնց վրայ հոգում են հազարաւոր տնտուներ։ Վերջապէս սրբութեանց սրբոց նախագաթում երեք, չորս, վեց կամ տասը փակ պալատներ՝ համաչափ, ընդարձակ, որոնք վերապահւած են պատանի թագուհիներին և պատանքի մէջ փաթաթւած, անշարժ, գունատ, սպասում են իրանց ժամին մնւած խաւարի մէջ։

Ա. Քիսմիսեան

(Վերջը միւս անգամ)

# Լծկաներն ու Ղոչիկը

Ս. ՈՒ Ա Կ

Եզն ու Գոմէշը երեսուն տարի
Սար ու ձոր վարել, լուծ էին քաշել
Դառն աշխատանքով ժայռ էին փշրել,
Բայց միշտ կողոպտել, զուրկ էին ապրել։
Մի սով տարի ձմեռւայ կիսին
Մարագը դարտակ, ամբարը խտակ,
Մանր ու խոշորով բուք ու բորանին
Ծիր լծկանները քաղցած մնացին։
Ձարերը կտրած ժողով կանչեցին,
Նստան խորհրդի և որոշեցին՝
Փոխ առնել պաշար Ղոչից մինչի կալ։
Լիազօրները դողդոջ քայլերով
Բակաղ Ղոչիկի դուռը կտրեցին,
Ոտն ու ձեռն ընկան, լացին, խնդրեցին,
Հինգ սոմար գարի, հինգ չափան դարման
Բնաղօնի համար վոխ պահանջեցին.

Խօսք տւին Հղջին առաջի կալին
Դլխից անպատճառ իրենց պարտքը տալ։
—Ախպէր, դուք գիտէք, Հղջիկը ասաց,
Հոգիս էլ ուզէք, չեմ կարող մերժել,
Բայց ինչպէս գնեմ ես գարի, գարման,
Չիթ չէ, կտաւ չէ, որ չափեմ ձեզ տամ։
—Դու գիտես, աղա, մեր օրը սև է,
Օգնէ, մի ջարդիլ դու մեր հաստ թևերն,
Մենք ութսուն ջան ենք, հողը կը բռնենք,
Այս պճեղները ջարդ ու բուրդ կանենք,
Բերք կը հասցնենք, շահով ետ կըտանք։
—Ախպէր, գիտեմ, որ դուք հալալ մարդ էք,
Ձեզ պէս ամօթով հողը չի ծնել.
Բայց բանն այնտեղ է, որ իմ ամբարում
Մի պաղուց գարի, գարման չի ճարւում։
Բայց որ խնդրում էք, էլ ճարս ինչ է,
Երթամ պարտք անեմ, հասնեմ ձեր դարդին։
Մարդ ենք, աշխարհ է, պիտ եօլա երթանք,
Մէկ ուրիշ օր էլ դուք ինձ պէտք կը գաք։
Ես հախ չեմ ուրում, բայց գիտէք, էլի,—
Ասաց Հղջիկը կէս խնդում դէմքով.—
Մարդ կայ՝ կաթ կուտէ, մարդ կայ՝ գառի միս,
Խոտ ուտող էլ կայ, ձւակեր էլ կայ,
Գորտ ուտող այնքան, օձակեր էլ կայ։
Մարդակերի հետ, գինարբուի հետ,
Զրիակերի հետ երբէք գործ չունեմ։
Բայց ես էլ ինձ եմ, ոչ էլ անարատ,
Ստամոքս ունեմ, թէև կէս-պուատ,
Միայն անպատճառ ամեն օր սրան
Մի թաս տաք արիւն բաժին պիտի տամ։
Եթէ խոստանաք ամեն իրիկուն
Մեր տունն ուղարկել մի գառ կամ մի ուլ,
Մի հորթ, կամ գեազակ, նոյնիսկ մի քուռակ,
Քանի մ' րոպէով, որ կարողանում

Նրանց շրթունքից մի քանի ումպ տաք—
Տաք արիւն ծծել, քիմքս քաղցրացնել,
Է՛լ հախն ինչիս է, շահն է՛լ ի՞նչ պէտք է։

---

Խնդիրը ծանր էր, գումէշը տքաց,
Եզը հառաչեց, բայց քաղցից տանջւած
Մատակի, կովի, հորթի ու կողբի
Բառանչոցները այնպէս վրդովեց,
Խռովեց նրանց սիրտն, ուղեղն, ոգին,
Որ անճարացած համաձայնեցան,
Ձղջին գիր տւին, զարին ու զարման
Բարձին ուսերին, առին տուն դարձան
Ու քաղցածներին մահից փրկեցին։
Բայց հէնց այդ օրը մի անմեղ գառի
Ձղջիկի դուռը մատաղ դրկեցին։
Անկուշտ բազազը թաղանթ թևերով
Հովահարելով քնացրեց խեղճին,
Յետոյ կամացուկ սուր ատամներով
Երակը ծակեց, արիւնը ծծեց,
Մինչ վերջի կաթիլ քամեց չորացրեց.
Ապա թշւառին ճանկից բաց թողեց։
Գառին նւազած մօր գիրկը տարան։
Հետևեալ գիշերն ուլին դրկեցին,
Ապա ալ հորթին, սիպտակ քուռակին,
Կողբին, խոճկորին, կարմիր հրնջին,
Մաքուն, մատակին իրար ետևից
Ամեն իրիկուն քշեցին տարին
Անխիղճ, անողոք պարտատէրի տուն։
Այսպէս անընդհատ ըստ պայմանագրի
Քնքուշ ու մատաղ անիւօս ձագերին
Ձիղջն ընդունում էր, արիւնը ծծում,
Քամում, խմում էր, կրակը գցում...։

---

Բանն այնտեղ հասաւ, որ տուն չըմնաց,
Ուր Հղչի դնչից աղի արտասուք,
Հառաչ, լաց ու սուգ չըլինէր մտած։
Հաղի կսկծից, մատակի կոծից
Անասուններըը բոցակալեցան։
Երբ աստուածեան բաժակը դեղուեց
Լծկանների խումբն այնպէս կատաղած
Մեծ գրոհ տուեց, որ այդ հոսանքին
Ոչ մր արարած չը համարձակուեց
Ընդ առաջ ելնել, ճամբէն խափանել։
Հուժկու լծկաններն մէջք մէջքի տուին,
Հղչիկի տունը հիմքից քանդեցին,
Գոյքն աւարեցին։ Ահեղ պատուհասն,
Որ տեսաւ Հրղչը, թողեց ու փախաւ,
Խոնաւ այրերում ապաստան գտաւ։

Եւ այդ օրւանից դեռ մինչի հիմա
Չի համարձակւում ցերեկը դուրս գալ
Մարդու երեալ։ Միայն գիշերներն,
Երբ նկատում է քնած անասուն,
Հրղչը թռիչքով վրայ է հասնում,
Թաղանդ թաթերով է հովահարում,
Անյագ շրթունքով արիւնը ծծում,
Իւր կործանւած տան վրէժն է լուծում։

**Ա.տրպետ**



# Ա Խ Ա Թ Թ Ո Ւ

Ածխաթթուն—մի գազ է, նա օդից ծանր է և արգելք է լինում վառելուն, այնպէս որ, եթէ նրա մէջ ընկղմենք մի որևէ վառուող մարմին, նա իսկոյն կը հանգչի։ Նրա հէնց այդ առանձնայատկութիւնն էլ կազմում է մեր փորձի առարկան։

Մենք կրակենք, շինելով մի թղթէ սիֆօն. դրա համար քառանկիւնի քանոնի վրայ կըփաթաթենք մի քան մի անգամ թղթի մի շերտ, որի վրայ առատ քսած կըլինի սօսինձ. յետոյ կը հանենք քանոնը և կըչորացնենք այդ ձևաւոր սառացած խողովակը, յետոյ դրա մի չորրորդ մասը կըկտրենք թէք կերպով և յետոյ միւս կողմերը դնելով միմեանց վրայ կըկպցնենք միմեանց սօսնձած թղթով։



Այդպիսով մենք կըստանանք մի սիֆօն, ինչպէս որ երևում է մեր պատկերի վրայ. նրա մի կողմը երեք անգամ երկար կըլինի միւսից։

Դրանից յետոյ, մի շիշ կըլըցնենք կիսով չափ ջրով, հետը քացախ խառնած (1 մաս թունդ քացախ և 2 մասը ջուր) և մէջը կածենք սօդայի մանր բիւրեղներ, որը փոշու ձևով կարելի է գտնել ամեն տան. իսկոյն մենք կըտեսնենք բազմաթիւ գազային փամփշտիկներ. դա էլ կըլինի ածխաթթու գազը։

Շիշի բերանը կըմտցնենք սիֆօնի կարճ կողմը իսկ երկար կողմի ծայրը կըդնենք մի ապակեայ անօթի մէջ, որի յատակում նախապէս պէտք է դնել երեք կտոր վառած մոմեր զանազան մեծութեան։

Ածխաթթուն, հաւաքուելով շիշում, մտնում է սիֆօնի կարճ խողովակով և երկար կողմով թափուում է ապակէ անօթի մէջ. շնորհիւ իր թանձրութեան, նա իսկոյն անցնում է անօթի յատակը. յետոյ նա քիչ քիչ սկսում է լցնել անօթը և միշտ աւելի ու աւելի խտանալով ու բարձրանալով, վերջապէս հասնում է ամենավոքր մոմի բոցին։

Մենք իսկոյն և եթ տեսնում ենք, թէ ինչպէս սրա բոցը նւազում և հանգչում է, մինչդեռ միւս երկու մոմերը վառւում են նախկին պայծառութեամբ։ Բայց գալիս է և նրանց հերթը. նախ միջակ մոմն է հանգչում և յետոյ ամենից երկարը (ի հարկէ, եթէ նա անօթի բարձրութիւնից կարճ է)։

Եթէ մենք փորձենք կրկին վառել մեր մոմերը, թէկուզ նոյն իսկ հեռացնելով շիշն ու սիֆօնը, դա մեզ չի յաջողուիլ, քանի որ ածխաթթուն հեղուկի պէս լցրել է անօթը։ Մենք կարող ենք կըրկին վառել մոմերը միայն այն դէպքում, եթէ շուռ տանք մեր անօթը և թոյլ տանք որ թափւի նրա միջից ածխաթթուն և նրա տեղ բռնի օդը։

Ա. Մ.



# Մանկական Աշխարհ

**Պատկերազարդ գեղարդ ամսաթերթ**

*Հրատարակում է մանկակցութեամբ ժրաջան աշակերտուհիների եւ աշակերտների:*

**Նպատակ**

*Մանկական Աշխարհի միջոցով կազմել ընդարձակ ծանօթութիւն հեռաւոր ընկերների և նրանց բնակավայրերի հետ: Գաղափար կազմել երեխաների կենցաղի և մտորումների մասին:*

*Այս նպատակին հասնելու համար դպրոցական աշակերտուհիները ու աշակերտները հրաւիրուում են թղթակցել և աշխատակցել Մանկական Աշխարհին, ուղարկելով իրանց բնակավայրերի, դպրոցների, աշակերտների, ուսուցիչների, ծնողների խմբական լուսանկարներ: Նոյնպէս լուսանկարներ հանդէսների, զբօսանքների շրջակայ գիւղերի:*

**Ծրագիր**

*Կենսագրութիւններ: Ճանապարհորդական տպաւորութիւններ և արկածներ: Ընկերական և դպրոցական կենցաղ. դասարան և մանկանոց: Հէքիաթ: Առասպել: Խաղ: Հանելուկ: Սովորութիւն ու նախապաշարմունք: Կատակ: Պատիժ: Թատրոն: Երաժշտութիւն: Նկարչութիւն: Եկեղեցի և ուխտագնացութիւն: Տնային թռչուն, ծաղիկ, անասուն: Ժամանակագրական լուրեր և հետաքրքրաշարժ պատմածք: Ազանդութիւն և հին օրեր: Պոատարկղ: Յայտարարութիւն:*

**Պայմաններ**

*1) Յօդուածի ճակատին պէտք է միշտ գրել մանրամասն հասցէն: 2) Առաջին յօդուածի հետ պէտք է ուղարկել և լուսանկարը, հետը մակագրած հասցէն, ծննդեան տարին, ամսաթիւը և ծննդավայրը: 3) Առանձին թղթի վրայ ծնողների, քոյրերի, եղբայրների և ընտանիքի բոլոր անդամների անունները, զբաղմունքը, եթէ հնարաւոր է և բոլորի խմբական*

լուսանկարը հանուած տանը կամ պարտիզում, բակում։

**Բաժանորդագին**

*Մանկական Աշխարհի տարեկան բաժանորդագինը աշակերտուհիների և աշակերտների համար ամեն տեղ 1 ր. է և հետն էլ պրեմիա Աղբիւր պատկերազարդ ամսագիրը։*

**Խմբագրատուներ**

*Բաց է ամեն կիրակի և տօն օրերին ու դեռեզած Աղբիւրի պ. խմբագրի սեղանի աջ ծայրում։ Այդ օրերն էլ ընդունում եմ աշխատակից - ընկերներիս, եթէ միայն հիւր գնացած չըլինեմ կամ Սօսեասիլնան մի որևէ պատճառով պանսիօնից այդ օրը ազատ թողած չըլինի ինձ։*

**Խմբագրութիւնից**

*Մանկական Աշխարհի աշխատակիցները եթէ կամենան ստանալ գրաւոր պատասխաններ պոստ-կարտերով, պէտք է իւրաքանչիւր պատասխանի համար ուղարկեն 10 կ. պոստի մարկա, չըմոռանալով և իրանց հասցէն։*

**Հասցէ**

*Թիֆլիս, Աղբիւրի խմբագրութիւն, Մանկական Աշխարհի պ. խմբագիր Ամբիկին։*

*Ա Մ Բ Ի Կ*

*Խմբագիր - հրատարակիչ*
**Մանկական Աշխարհ** *ամսաթերթի։*

*ԹԷ ԻՆՉՊԷՍ ԵՍ ԽՄԲԱԳԻՐ ԴԱՐՁԱՅ*

*Ընկերներ!*

*Ես ծնուել եմ նախորդ XIX-րդ դարում և տասը տարիս լրացաւ ճիշտ այս փետրուարի 8-ին։ Հարկ կա՞յ ասելու թէ որ թուականին եմ ծնուել։*

*Ծնուել եմ Աղբիւրի խմբագրատանը, ուր ծնողներս, ախ իմ սիրելի ծնողներս... նրանք երեք տարի առաջ նահատակուեցին Շուշում...*

*Հա, երբ ծնողներս Շուշուց եկել էին բարեկենդանի տօների առիթով Զարուհի տատիկիս մօտ։*

Երբ ես ծնւում եմ Աղբիւրի խմբագրատանը, պատմում են, թէ պ. խմբագիրը, Տիգրան քեռիս, որ շատ է սիրում մանուկներին, անչափ ուրախանում է և իսկոյն ինձ դնում կշիռի մէջ և կշռում։ Ապա հանում է իմ լուսանկարը, երբ ես դեռ մի օրական էլ չեմ լինում։ Նորերս ես տեսայ իմ այդ պատկերը. լաւ է, որ դուք չըտեսնէք։ Եւ հէնց այդ պատճառով ես աճապարում եմ տպագրել ձեզ համար իմ այժմեան պատկերը։ Դուք էլ ուղարկեցէք ձերը ինձ և ես կաշխատեմ տպագրել մեր թերթի մէջ։

Ինձ մկրտում են Աղբիւրի խմբագրատանը և անունս իմ պապի՝ հօրս-հօր անունով, որ նոր է լինում վախճանւած, դրնում են Համբարձում։ Իմ պապը և տատը շատ նշանաւոր են եղել իրանց մեծ-մեծ գործերով։ Նրանք Շուշի քաղաքում հիմնել են իրանց սեպհական տանը օրիորդաց ուսումնարան և չքաւոր աշակերտներին ու նրանց ծնողներին էլ խնամել։ Ղարաբաղի թեմական դպրանոցի հիմնւելուն նպաստել են և այլն և այլն։ Եւ ի՞նչ լաւ են արել, որ իմ անունը Համբարձում են դրել. անպատճառ ես կաշխատեմ նրա նման մեծանալ և նրա կատարած գործերը շարունակել։ Ասում են, որ ես էլ շատ նման եմ նրան։ Ո՜հ, որքան ուրախ եմ։

***

Գարնան վերադառնում ենք Շուշի և գնում մեր կալւածքը Թաղա-վարդ։ Ո՜հ, ընկերներ, եթէ իմանաք ինչ սքանչելի տեղ է մեր Թաղա-վարդը. ինչպիսի ծաղիկներ կան, դեղը, փոքրիկ ձկնիկները, մեր գառները, հորթերը, անասունը։ Է՜հ... լաւ, մի ուրիշ անգամ կընկարագրեմ։

Գիւղում ես սկսում եմ խօսել գիւղացու երեխաների նման, խաղում եմ նրանց հետ։ Ապա սկսում եմ կարդալ, գրել, նկարել, երգել և պարել։ Էհ, իմացած լինէք, ես հրաշալի թէ պարում եմ և թէ երգում։ Կարծեմ վատ էլ չեն իմ բանաստեղծութիւնները, շարադրութիւնները. սպասեցէք, կըտպագրեմ, կըտեսնէք և կըգրէք քննադատութիւն։ Իմ մեծ եղբայրը՝ Գրիգորիսն էլ երևելի նկարում է և ձիու վրայ, չընայած որ ինձանից չորս տարով է մեծ, այնպէս է նստում և այնպէս քշում, որ կըզոդաք նայելուց։ Իսկ քոյրս, Մայիսն, նա դեռ փոքր է, ինձանից էլ երկու տարով փոքր, նա այժմ Բաղու Մերի հօրաքրոջս մօտ է Գրիգորիսի հետ։

***

Ա՛ռ այժմ մեր տունն աւերակ է. Թուրքերը Շուշում հրդեհեցին մեր մեծ տունը, ուր օրիորդաց ուսումնարանն էր, ուր Թատրոնն էր, ուր հազարաւոր մարդիկ յուսահատ, տխուր մտել են և ոգեւորւած, ուրախ դուրս եկել։ Գիւղի մեր տունն էլ է կիսաւերակ։ Բայց ոչինչ. մենք կըմեծանանք, ուսում կառնենք և մեր բարի գործերով չարագործ մարդկանց ղըջացնել կըտանք իրանց մեղքերը։

Իմ ծնողների մահից յետոյ մեզ

երեք որբերիս բերին Բագու Մերի հօրաքրոջս մօտ։ Այստեղ գիւղի հակապատկերն էր։ Բետին, հօրաքրոջս ինձնից փոքրիկ աղջիկը, արդէն խօսում էր գրում հայերէն, ռուերէն, ֆրանսերէն, գերմաներէն։ Հայերէնն էլ ինձ նման չէր խօսում։ Ինձ չէր հասկանում, «քընեցալըմ, կեալու ըմ, հինչանիմ թա», որ ասում էի։

Բայց օրիորդը սկսեց և ինձ ու Մայկօի հետ էլ պարապել և այժմ ես էլ բեռու նման հայերէն մաքուր խօսել գիտեմ։

Իմ անունը կրճատել էին գիւղում և Ծումա էին ասում։ Տիգրան-քեհիա շատ բարկանում էր, որ ինձ Ծումա էին կանչում. նա ինձ անուանեց Ամբիկ։ Մերի-հօրաքրոջս էլ շատ դիւր եկաւ Ամբիկը և նա էլ սկսեց ինձ Ամբիկ կանչել։ Իսկ Զարուհի տատիկս հէնց սկզբից ինձ Համբարձում է կանչում, ասում է իմ եղբայր մեծ Համբարձումը գնաց երկինք և ուղարկեց քեզ փոքրիկ Համբարձումին։ Մեծացիր նրա նման, ասում է, եղիր մեծ նրա մեծ-մեծ գործերով, իսկ նրա բաղդով չըծերանաս, այլ շատ բաղդաւոր և միւթաբուած ու ծերութեանդ օրերում կատարած գործերիդ պտուղները վայելելիս։

***

Անցկացած տարին, 1908 թիւ յունուարի 25-ին լրացաւ Աղբիւրի քահանայութեան 25-ամեակը։ Այդ օրը յաւերժացնելու համար պ. խմբագիրը, Տիգրան-քեհիա, մեծ հանդէս է սարքում իր բոլոր աշխատակիցների պատուին, նւագահանդէս և այլն։ Ահա Մերի-հօրաքոյրս, որ վճռել էր ինձ ուղարկել Թիֆլիս մեր սիրելի Սօվսիլնի դպրոցը, Բագուից ճանապարհում է ինձ այնպէս, որ Աղբիւրի այդ նշանաւոր հանդիսի երեկոն հասնեմ ես Թիֆլիս և բոլորի կողմից թէ լինեմ պատգամաւոր և թէ հէնց այդ նշանակալից օրն էլ սկսի իմ դերպրոց մտնելս։ Բայց շնորհիւ մեր երկաթուղիների անկարգ ու անկանոն լինելուն, խորտակւում է մեր գնացքից առաջ ապրանքատար գնացքը Բալասջարու մօտ, որ Բագուից 16 րոպէի ճանապարհ է և առաջին կայարանը, փակւում ճանապարհը, մենք ուշանում ենք և ես Թիֆլիս եմ հասնում յունուարի 26-ին։

***

Ճշմարիտն ասած, ես մտածում էի առաջ պինւորական լինել, շըքանշաններով լցնել կուրծքս, որ փողոցով պինւորներիս հետ թուրս հանած, մուզիկին ածելով անցնէի, փոքրիկ երեխաներ էլ ինձ նայէին։ Բայց այժմ հաստատապէս վճռեցի խմբագիր լինել։ Եւ եթէ իմանաք ինչ լաւ բան է խմբագիր լինելը։ Եթէ պատմեմ, եթէ գրեմ, ես համոզած եմ որ ամենքդ էլ կըկամենաք խմբագիր լինել, պա՜...րոն խմբագիր լինել ու ես կըմնամ առանց աշխատակիցների ու մեր Մանկական Աշխարհ նորաբողբոջ ամսաթերթը լոյս չի տեսնիլ ձեր մասնակցութեամբ։ Ուրեմն առ այժմ դնեմ վերջակէտ և սպասեմ ձեր յօդւածներին։

**Ամբիկ**



## ԿՈՒՆԿ

(Ժողովրդական)

Կու՛նկ, կունկ, կրկ՛ես կանես,
Մ՚ես խաբարը Բաղդատ տանես.
Կըզաս կանգնես խուրմի ծառին,
Մ՚ոխկ կանես մեծ սրահին.
Պարոն քարէն տաշ անելիս,
Խաթուն նանը նախշ անելիս
Կրկ՛ես կանես, հաց կընստես,
Կրկ՛ես կանես, լաց կընստես.
Մ՚ի մ՚էր ունես խնկի տակին,
Ծամ՚եր ունի տանկի տակին:

Գ. Ս.

## ԲՈՒՆԳԼՆԵՐ

1. Բու՞նգլ, բունգլ մի շայի,
   Կէսը կե, կէսը պահի:
2. Սեւ է սաթի նման,
   Սիպտակ է կաթի նման.
   Կլոր է պուլկի նման,
   Էրկէն է իլկի նման:
3. Էն ի՞նչն ա, սեւ եզը չուլեմ, չուլն ուտես:
4. Ե՛, ե՛, գալիս չի, գալ մի՛, գալ մի՛, գալիս ա:
5. Հուպ տամ, բունովս մին, քաց անեմ, աշխարքովս մին:
6. Սեւ հաւը ծկլթայ, ծուն վէր գցի:
7. Պատաւր ծմակում, ոտները կրակում:
8. Մսէ տուն, մազէ սրահ:
9. Էն ի՞նչն ա, մեռածը սադին պահում:
10. Գործածը քաց՝ անենք, թխածն ուտենք:

Ծիկլօ գրող

## ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

*Թովուզ. Հ. Տ.-Ց. Բ.։* Տարեկան 1 ր. Աղբիւրի բաժանորդագին նշանակեցինք այս տարի, որպէսզի հարստի հաւասար և չքաւոր ծնողը կարող լինի իր զաւակին ընծայաբերելու Աղբիւր։ Այդ 1 ր. բաժանորդագին արտօնութիւնը պատկանում է բացառապէս դպրոցական աշակերտներին ու աշակերտուհիներին և ոչ, նոյն իսկ գիւղական ղպրոցներին։ Եթէ Մովսէս գիւղի ուսումնարանը նիւթապէս անզօր է Աղբիւրին տարեկան 3 ր. բաժանորդագին վճարելու, հաղորդեցէք, մենք թէ Աղբիւրը և թէ Տարազը բոլորովին ձրի կուղարկենք։ Սակայն մինչև ե՞րբ խրախուսենք ձրիակերութիւնն ու մուրացկանութիւնը...

Ջանացէք, հայր-ամէր, ձեր հօտի մէջ պատւաստել սեպհական հալալ վաստակի արդիւնքներով ապրելու սկզբունքը։ Մեր ազգը շատ թշուառութիւններ է կրել, բայց երբէք իր մարդկային արժանապատուութիւնն այնքան չէ եղել նսեմացրած, ինչպէս վերջին ժամանակներս՝ ծրիակերութիւն, մուրացկանութիւն և սրանց բնական հետևանք ղրամաշորթութիւն։ Տարածեցէք, ամէր-հայր, ձեր շրջանի բոլոր գիւղերի խրճիթներում Աղբիւր։ Եւ ո՞ր հայ գեղջուկը չի կարող գէթ մի տարի 1 ր. վճարելով, ամբողջ տարին ստանալ Աղբիւրը։

*Օշական, Ռուս. Ս. Թ.։* Նշանակելով Աղբիւրին 1 ր. բաժանորդագին, աշակերտը բացի կարդալուց չէ՞որ հիմք է դնում և իր մատենադարանին։ Մեծ գործ կըլինէք կատարած, եթէ ամբողջ Օշականում ծուխ չըմնայ, որի դարանում Աղբիւր չըլինի։

*Թիֆլիս, Ց. Զալեան։* Բոլորովին ուղիղ էք բացատրել № 1 ֆօկուս-խնդիրը։ Սակայն չէք գրել ձեր հասցէն, որպէսզի կարող լինենք ստուգել, թէ արդեօք դուք Աղբիւրի աշակերտ բաժանորդ էք, թէ ոչ։ Եթէ այո, խընդրում ենք մտնել մեր խմբագրատունը և ստանալ նոյնպէս մըրցանակը՝ 10 գիրք և 10 պատկեր, որ ուղարկեցինք էմին Մ. Գիւլնազարեանին։

*Նկատերինօղար, Էմ. Մ.-Գիւլն...եանց։* Դուք էլ էք ճիշտ բացատրել № 1 ֆօկուս-խնդիրը և ձեզ արդէն ուղարկուեց Նարդոսի, Շիրվանզադէի, Վ. Փափազեանի, Կ. Մ.-Շահնազարեանի, Զաւախեցու Ց. Սօլօվեանի գըրուածքներից և Լերմոնտովի, Պուշկինի, Յար. Թումանեանի, Յովհ. Թումանեանի բանաստեղծութիւններից մի-մի օրինակ, ընդամէն 10 գիրք և 10 հատ զանազան պատկերներ։ Յանկանում ենք մեծանաք այնպէս, որ կարող լինէք գիտութեան և արուեստի շուրջը համաշխարհային մըրցանակներն էլ ստանալու։

*Քարվանսարայ. Կ. Հ. Բար. Ընկ.։* Տարիներ առաջ մենք ընծայեցինք ձեր ընկ. կենդրոն. խորհրդին 1000 ր. գիրք գիւղ. գրադարան. և ուսում. ձրի բաժանելու համար, բարեհաճեցէք դիմել այնտեղ։ Մեր տրամադրութեան տակ գտնուղ օրինակներն արդէն կարգադրւած են։

### ԼՈՒԾՈՒՄՆ ՖՕԿՈՒՍ-ԽՆԴՐԻ

(Աղբիւր № 1)

Կօլլօդիում նիւթի յատկութիւնն է լերդանալ ջրի մէջ։ Երբ որ կօլլօդիումով պատած շաքարը դնում ենք ջուրը նա խորասուզւում է, իսկ երբ շաքարը արդէն հալւում է, կօլլօդիումի լերդացած թաղանթը բարձրանում է ջրի երեսը, որովհետև կօլլօդիումը թեթև է ջրից, այնպէս որ ջրի երեսին կանգնածը շաքար չէ, այլ կօլլօդիումն է, ձևակերպած շաքարի ձևով։

**Ց. Զալեան**

*Թիֆլիսում ներկայ փետրուարի 24-ին, երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց ժողովրդական երգիչ*

# ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆՒՆ

*յուղարկաւորութիւնը կիրակի, մարտի 1-ին, իր բնակարանից դէպի Վանքի Մայր տաճարը և այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը, ուր կամփոփւի մարմինը։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐԵԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ԴԱՀԼԻՃ*

*Շաբաթ, փետրուարի 28-ին*

**Իշխանազնուհի Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկ**

*կըզաստիօսէ*

## ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՆՉ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

### Ծ Ր Ա Գ Ի Ր

*1) Երեխայի դաստիարակութիւնը սկսած առաջին օրերից, 2) Շրջապատողների ազդեցութիւնը, 3) Ընտանիքի նշանակութիւնը, 4) Մայրական դպրոցի անհրաժեշտութիւնը, 5) Ինչ բան է մայրական դպրոցը, 6) Մայրական դպրոցի կարգաւորումը ժամանակակից պայմաններում, 7) Ինչպէս են ժամանակ անցկացնում երեխաները մայրական դպրոցում, 8) Ժողովրդական մայրական դպրոցների անհրաժեշտութիւնը, 9) Ինչպէս լրացնել երեխայի ազատ ժամերը, 10) «Մանկական աշխարհ» («Дѣтскій міръ») ընկերութեան նպատակը։ Տոմսակները կարելի է առանձ խնամատուի գրասենեակում և «Дѣтскій міръ» ընկերութեան բիւրօյում՝ Մէքայէլեան փողոց, № 138։* *1—1*

*ՄԻՆՉ*

**Ընկերութեան առևտրատանը մէջ**

*ՋԱՏԿԱԿԱՆ*

*ոճների առիթով վաճառում են*

*ՎԵՐՋԻՆ ՏԱՐԱԶՈՎ ԳԱՏՐԱՍՏԱԾ*

*մանկական զգեստներ, գգնոցներ, կանանց տղամարդկանց սպիտակեղէններ, նաև անգլիական և այլ ձևի կանանց վերևի*

*ԿՕՓՏԱՆԻՐ։*

*Գները շատ մատչելի են։*

*Հասցէն՝* Гановская, 7. *2—1*

*ԱՂԲԻՒՐԸ դպրոցական աշակերտների եւ աշակերտուհիների համար տարեկան ՄԷՆ րուբլի, դպրոցների, գրադարանների եւ ծնողների համար միեւնոյն ԱՂԲԻՒՐԸ ԵՐԵՔ ր., (արտասահման ՀԻՆԳ ր.)։ Հասցէն՝*

*Тифлис.* Редакція «*Азбук*».

**ՋԷՆՔԻ ԱՄԵՆԱՇԱՀԱԶՈՒ**

**ՊԱՀԱՍՏ ԹՈՒՄԱՍՏԱՆՈՒՄ**

**Ա. ԲՈՏԿՈՎԻ**

*ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ*

**А. Боткова, въ Москвѣ**

Б. Лубянка, **20**, Нижегород. Ярмарка, Шоссе.

*Զրի ուղարկում է չրաեփնուած փառահեղ լիակատար գնահատումներ 1908 և 1909 թ., որ պարունակում է* **տարբեր** *դրամական հրացանների այն ամէն տեսակները, ինչ կարելի է գտնել մեր մոլորակի վրայ. սկսած ամենատաղչնակարդերից մինչև նորագոյն ժամանակներս:* **ՀՐԱՑԱՆՆԵՐՈՒ ՍՏԱՊԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ 5-ից մինչև 1000 րուբլի արժողութեամբ։**

*Գները դուրս են մրցումից. 4—1*

*Հաշուապահական կուրսերն աւարտած*

*ՄԻ ՀԱՅՈՒՀԻ*

*որոնում է պաշտօն։ Հասցէն՝* Тифлис, Бюро Печати. *2—1*

*Տպատան «ՊՐՕԳՐԷՍ» Ընկ., Վել. 7.* Тип. Т-во Прогресс, Велем. 7.